

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԷՐԿՄԱՆ ՁԱՅՔԻՆԻ

ԱՆՏԱՌԱՊԵՏ ՔՐԵԴԵՐԻԿ



ԹԱՐԳՄ. ԳԻՒՑ Ա. Գ. ԱՂՈՆՆԱՆՆ

ԿՐ. 1—16



ԱՆՏԱՌԱՊԵՏ ՓՐԵԴԵՐԻԿ

(ԷՐԿՄԱՆ ՇԱՏՐԻԱՆԻ)

Ա .



նտառապետի պաշտօն էր վարում Շաէն-
րախում, — սկսեց ծերունի Ֆրեդերիկը, —
իմ հոկոդութեան էր լանձնուած ամբողջ
Սալերնեան շրջանի անտառների ամե-
նալաւ մասը: Ես մի լաւ տնակ ունէի,
պարտիզով պատած, ուր խնձորենիները,
տանձնիներն ու սալորիները աշնանն
ալնքան պտուղ էին տալիս, որ քիչ էր
մնում ծառերը ծանրութիւնից փշրտուէին. ըսցի ալդ ես չորս
դեսնատին էլ արօտատեղ ունէի ճիշտ գետի ափին: Անտա-
տառը, չնալելով իւր ութսունամեայ հասակին, դեռ էլի մա-
նում էր վառարանի մօտ նստած, և անգամ երբեմն էլ օդ-
նում էր կնոջս ու աղջկանցս տնտեսական գործերում: Կինս
էլ նալում էր մեր դետնի մշակութեան և հսկում էր անասուն-
ների վերայ: Տարիները, ամիսներն ու շաբաթներն անցնում
էին մեզ համար հանդարտ ու խաղաղ: Եթէ ալն ժամանակ
գանուէր մէկը, որ ինձ ասէր, թէ. «Անտառապետ Ֆրեդերիկ,
տեսնո՞ւմ է՞ք դուք Էլզասի այս ընդարձակ հովիտը մինչև նոյն-
իսկ Ռէյնի եղեբքը, այս հարիւրաւոր գիւղերը, չորոնք շրջա-
պատուած են վարսակի, կորեկի, կանեփի, վուշի, գալլուկի,
դարու, ծխախոտի ճոխ դաշտերով, որոնք ալեկողծուած են
հողմից ինչպէս ծով: տեսնո՞ւմ է՞ք գործարանների ալդ բարձր
ձիւղ խողովակները, ալդ ջրաղացներն ու սղոցարան-
ները, ալգիներով ծածկուած ըլուրները, հաճարի ու

եղենու խիտ անտառները, որ նաւաշինութեան ամենալաւ նիւթն են տալիս ամբողջ Ֆրանսիայում, լեռների գագաթներին բարձրացող հին հին պալատները, այլ՝ դարերի շնորհիւ կիտակեր ամբողջները—Բրէլզախ, Շլէտշտադ, Ֆալլցրուրգ և այլն... Նախցէք, Յրեգէրիկ, այդպէս հեռու, ինչքան որ մարդկային աչքը կարող է կտրել, նախցէք այդ բոլոր սարածութեան վերայ Վէլսէնբուրգից մինչև Բէլֆօր—և իմացէք, որ այս բոլորը մի քանի տարուց լետող պրոուացիներին պիտի պատկանի. նոքա պիտի լինին այս ամենի տէրերը. այստեղ ամենուրեք հորիզոնը նոցանը կլինի. նոքա հարկերը կաւելցնեն, կուղարկեն իրանց հարկահանները, վերադննողները, անասառայետները և դիւղական վարժապետներն ամեն գիւղերի. Եւ այստեղի բնակիչները նոցա պիտի հպատակուին. նոքա ստիպուած պիտի լինին քալել գերմանական զօրքերում Վիլհէլմ կայսեր ենթասպաների հրամանատարութեան ներքոյ:

Այս ասողին ես խելացնոր կհամարէի և զայրույթից ընդունակ կլինէի մինչև անգամ ապտակ տալ նորան:

Բայց այսպիսի մի գուշակութիւն ճշմարիտ պիտի համարուէր, և մինչև անգամ շատ թուլ արտապատուած ճշմարտութիւն, որովհետև մենք անհամեմատ աւելին տեսնաք ու կրեցինք. ինձ համար ամենից սարսափելին էր լեռները թողնել և իմ տարիքում տեղափոխուել մի չարդաղ, որակից միայն տանիքներէ կղմլնտրներն ու ծխնելողներն էի տեսնում: Գիշեր ցերեկ այդ սոսկալի աղէտի մասին մտածելով ես ինձ զգացի լքուած երկնքից ու երկրից:

Աղուէսներն ու գալերը, երբ նոցա թաթը վիրաւորում էք, վէրքը լիզում են և առողջացնում. նասպատակները, հէնց որ նոցա վիրաւորում են, իսկոյն մատկում են, կամ թաղում թիւրում և առողջանում. շներից որ լակոտները խլեն, խեղճ անասունները մի քանի օր նիհարում են, ապա մոռանում են իրանց ցաւը—և ամեն ինչ կարգի է ընկնում: Բայց մենք այդպէս հեշտ չենք կարող մոռանալ մեզ հանդիպած դժբաղտութիւնը. և որքան շատ ժամանակ է անցնում, ամենքան աւելի ենք զգում:

Ինձ հարցնում ես, թէ ինչպէս ընկալ ես այս սրջը՝ Վիլիեա, և ինչպէս եմ ապրել մինչև այսօր. չեմ հրատարուում պատասխանելուց. Վիլիեաում և Լաշապելում բոլոր հիւղերը

լի էին գաղթեցրած զանուորներով ու զիւղացիներով: Ես լըսեցի, որ հարեհնիք գաղթողների թիւը հասնում էր մինչև երկու հարիւր հազարի: Սա կարելի բան է: Երբ ես հարեհնիքիցս դուրս ելայ, ամբողջ ճանապարհը գաղթականներով լի էր: Բայց այս ամենը քեզ այնպէս լաւ լատնի է, ինչպէս ինձ. ես կիսօսեմ լոկ իմ մասին, և հէնց սկզբից կսկսեմ: Այսպէս առաւել պարզ կլինի:

Երբ պապդ, դատարանի նախկին նախագահը, 1865 թուին բարձր պաշտօն ստացաւ և Բրէտայն դնաց, ես շատ ուրախ էի, որովհետեւ նա միանգամայն արժանի էր, նորա տեղը Սափերնան չէր, նա չափազանց լաւ և հմուտ մարդ էր. միւս կողմից նորա հետանալն ինձ վշտացրեց:

Հալրս, որ առաջ անտառապետ էր Գոզէնհայմում, պ. նախագահի մասին ինձ հետ խօսելիս՝ միշտ առանձին լարգանքով էր խօսում, անդադար կրկնելով, որ նա մեր քարերարն է եղել և միշտ սիրել է մեր ընտանիքը. ինքս Շտէյնքախում նորա շնորհիւ եմ պաշտօն գտել. նորա խորհրդովն իսկ ծերունի անտառապետ Բրուտոր իւր միակ դուստրը՝ Կատերին Բրուտային ինձ կնութեան տուաւ:

Երբ հաշուէտուութեան համար Սափերն եմ գնացել, ամեն անգամ սիրով եմ նախել այն տան վերայ, ուր քսան տարի շարունակ ես սիրալիր ընդունելութիւն եմ վայելած. այդ արժանաւոր մարդու բացակայութեան կսկիծը ծանրանում էր իմ սրտի վերայ:

Ես ու ընտանիքս սաստիկ վշտացած էինք նաև այն քանի համար, որ դու արձակուրդին ալ ևս չէիր գալու մեր անտառային տնակը: Մենք այնպէս սովոր էինք քեզ սպասել, որ վաղօրօք ասում էինք.

—Ահա սեպտեմբերն էլ մերձենում է, փոքրիկ Ժօրժը շուտով կգալ:

Կինս վերել անկողին էր պատրաստում. փոռում էր ձիւնի պէս սպիտակ սաւան, լուանում էր լատակն ու լուսամուտները:

Ես թակարդներ էի պատրաստում մշահաւանների և զանազան տեսակ կեր կարմրախալտերի համար. ուղղում էի մեր հիւղը թուխկատարներ սրսալու, փորձում էի սուլիչները և նորերն էի շինում արձձից և ոսկորից: Կարգի էի դնում կարգ թերն ու պարանները մեր արկղներում, նախօրօք դուարձաւ:

նալով, որ այդ ամենը լաւ դրաղմունք պիտի լինին քեզ համար:

— Լսեցէք, Ֆրեդէրիկ հալրիկ, վազն անշուշտ երկու ժամին զարթեցրէք ինձ. դեռ չլուսացած պիտի գնանք:

Ես գիտէի, որ դու արջնամկան պէս կը քնես, մինչև որ չարթնացնեմ և ծով չանուանեմ՝ չես վերկենալ, բայց երեկոյան քնելիս դու դարձեալ պատրաստութիւն կը տեսնէիր երկուսին վերկենալ, անդամ մէջ գիշերին. — այս ամենը զուարեացնում էր ինձ:

Երեակալում էի, թէ ինչպէս դու, շունչդ պահած, նրստելու ես հիւզում, երբ կազն-աղաւներն ու մշահաւերը կ'մտենան, տերևները տակից դուրս նայելով, և ես որպէս թէ լըսում էի արդէն քո շշուէջը.

— Ահն, ահն եկան...

Եւ դու չէիր կարողանում քեզ պահել մինչև արշալուսին հիմն չէին թուխատարները:

Այո՛, Ժօրթ, այս ամենն ուրախացնում էր ինձ, և ես արձակուրդներին դուցէ նոյն անհամբերութեամբ էի սպասում, ինչպէս և դու:

Մեր փոքրիկ Վարդ-Մարին էլ ուրախանում էր քո գալու վերայ. նա շտապով նորանոր ցանցեր էր հիւսում և անցած տարիների կախուած կոճկատեղերը վեր քաշում. բայց հէնց որ պապդ գնաց՝ վերջացաւ, և մենք գիտէինք, որ չես գալ մեզ մօտ:

Երկու թէ երեք անգամ մեր լիմար կալասը, որ կովեր էր արածացնում արօտում, ոտաւոր տեսնելով դէպի Դօզէն-հայմ իջնելիս, վազեց մեզ մօտ, բերանը մինչև ականջները բացած և բոլոր ուժով աղաղակ բարձած.

— Նն է, նն, նա է որ կալ... անմիջապէս ճանաչեցի նորան... պալուսակն ուսին է ձգել...

Ռազոն էլ հաջելով հետեւում էր այս ապուշին... Ես պատրաստ էի երկուսին ջարդել, որովհետև գիտէինք, որ դու Քէնն ես գնացել: Պ. նախադահը մեզ գրում էր, որ դու ամենօր լիշում ես Շտէլնրախը. ես առանց այն էլ վատ էի տրամադրուած, և կալասի այս հնարած բանն էլ տեսնելով ինքս ինձ կորցրի:

Կինս ու Վարդ-Մարին, պտուղները պահարանի զարագներում դարսելով՝ ասում էին.

—Ի՞նչ հիւթալի տանձեր են... Բնչ հրաշալի արքայա-
խնձորներ... երանի թէ Ժօրժը լետ դառնար,—ամբողջ օրը
այստեղ կվազվզէր...

Նոքա ժպտում էին արտասուալից աչքերով: Քանի՛-քա-
նի անգամ ես ինքս, որսից լետ դառնալով, ասել եմ.

—Ահա... տասը. տասնըհինգ տասնեակներ կան այս-
տեղ... Բնչ զլխներին ենք տալիս սոցա: Երեխայ չկան... դո-
նէ կատուներին տանք: Ես ուտողը չեմ:

Հաւատան, Ժօրժ, ես սիրում էի որսի գնալ քեզ համար,
ինքս երբէք չէի ախորժում ոչ թուխկատարներէից և ոչ իսկ
մշահակերից: Ես միշտ գերադասել եմ մի լաւ կտոր միս և եր-
բեմն միսլն կերակրի տեսակը փոխելու համար՝ որսի միս եմ
կերել:

Բ.

Ձմեռուայ մէջերքում, երբ լեռների բոլոր ճանապարհ-
ներն ու շաւիղները ձիւնով էին ծածկուած, երբ զիշերները
ամեն կողմից լուում էր եղեամով ծածկուած եղևնիների ճալ-
թիւնը, մի անգամ կի՛նս, որ ձմեռուայ հէնց սկզբից գունատ
և լուռ էր, կրեկոյեան վեց ժամի մօտերքը վառարանի կրա-
կը վառելիս ասաց ինձ.

—Ֆրեդէրիկ, ես պարկում եմ. վատ եմ զգում ինձ... դո-
ղացնում եմ:

Այդպիսի բան նա երբէք չէր ասել ինձ: Այդ կիտջից ես
ոչ մի գանգատ չէի լսած. կրիտասարդութեան օրերում նա
տնտեսութիւն էր անում և երկունքից ազատուելու մինչև
վերջին օրն էլ աշխատում էր:

Ես, առանց որևէ բան կասկածելու, պատասխանեցի.

—Շատ մի չարչարուիր, կատէրին... Զափազանց շատ
ես աշխատում, հանգիստ առ մի փոքր. ընթրիքը Վարդ-Մա-
րին կը պատրաստէ:

Ես մտածեցի. քսան տարին մի անգամ—մեծ բան չէ.
Թող մի փոքր հանգստանալ:

Վարդ-Մարին ամանով ջուր տաքացրեց, որ նորա ոտ-
ները մէջը դարսէ, և մենք հանգիստ ընթրեցինք, սովորա-
կանի պէս, գետնախնձորով և լուով: Ոչ մի արտակարգ միտք
անցաւ մեր գլխով. իննը ժամին մօտ, ծխամորչս քաշելով,

գնացի քնելու. երբ մահճակալիս մտեցալ՝ կնոջս բամբակի-
պէս ապրտակ տեսալ, լալն բացած աչքերով: Ես ձալն տուի-
նորան.

— Կատէրին:

Նա չչարժուեց: Ես կրկնեցի.

— Կատէրին. — և ձեռքը շարժեցի: Ձեռքը բոլորովին
սառն էր:

Քաջարի կինս վերջին շանդամ էր քնել. նա երկար էր
տանջուել, առանց սրեւէ դանդատ արտասանելու:

Ես սթափուեցի: Խեղճ Վարդ-Մարին զրկուել էր մօ-
րից: Սիրտս պալթում էր այդ մտածումից. ի՞նչ թւում էր,
թէ այս հարուածից ետքէք չէի ուշքի գալու:

Պառաւ տատը նիրհում էր բազկաթուռի մէջ. ալժմ նա
էլ աչքը բաց արեց: Վարդ-Մարին բարձր ձայնով հեկեկում
էր և հռուչում, և Կալասն անգամ, ալն խեղճ ապուշը, մըթ-
մըթում էր.

Ա՛յս, երանի՛ թէ ես մեռնէի դորա փոխարէն...

Մենք հեռու անտառումն ենք ապրում, և ստիպուած
եղանք խեղճ կնոջս խորը ձեան վերալով տանել թաղել Դօ-
ղէնհայմում: Դագաղը դրինք սալի վերալ, մննք էլ ետևից
Վարդ-Մարին ալնպէս էր լաց լինում, որ ես ամեն քալում
ստիպուած էի սիրտ տալ նորան: Բարեբաղտաբար տատը մեզ
հետ չեկաւ, ալլ նստած աղօթում էր հանգուցեալի համար:

Ուշ գիշերով լետ դարձանք: Կատերինը մնաց ալնտեղ
ձիւնի տակ իւր հարազատների մօտ, որոնք հանգստանում
էին Դօղէնհայմի գերեզմանատանը եկեղեցու ետև. նա ալն-
տեղ մնաց. իսկ ես մտածում էի.

Ճի՞նչ պէտք է լինի մեր տան դրութիւնը: Դու հօ էլ
պսակուողը չես, Ֆրեդերիկ: Դու մի լաւ կին ունէիր. ով կե-
բաշխատրէ, որ երկրորդը ամենալատ և ռալլ կինը չէ լի-
նելու ամբողջ թաղի մէջ...: Երբք չես կարող մի ալլ արժա-
նաւոր կին գտնել քեզ համար: Պէտք է մենակ ապրես: Բայց
ի՞նչ պէտք է անել... Ս'ի պէտք է հողալ ամենքի մասին: Տա-
տը շատ պա՛աւ. է, իսկ Վարդ-Մարին տակաւին երեխալ է:

Ես լուսահատուած էի, մեր բոլոր բարիքները պիտի ու-
չնշանալին, և մեր այսքան տարուալ խնայողութեամբ աշխա-
տածը օրէցօր պիտի անհետանար:

Բայց իմ փոքրիկ Վարդ-Մարին դառաւ ինձ համար կա-

տարեալ մի գանձ, մի մանուկ կատարեալ այրականութեամբ
և առողջ մտքով: Հէնց որ մօրը թաղեցինք, նա սկսաւ նորա
պարտաւորութիւնները կատարել, հսկելով դաշտի աշխա-
տանքին, անասունին և տնտեսութեանը և պատուէրներ տա-
լով կալասին: Խեղճ փոքրիկը ականջ էր դնում նորան. իւր
պարզութեան մէջ հասկանում էր, որ նա է այժմ իւր փրութիւն:

Ահա այս է աշխարհիս կեանքը:

Այս տեսակ վիշա կրելով, մտածում ես, թէ առաւել վատ
բան քեզ պատահել չէ կարող, բայց դա միայն սկիզբն էր, և
երբ ես այդ լիշում եմ, ինձ թւում է, թէ մեզ համար ամե-
նամեծ բաղտաւորութիւնն այն կլինէր, որ այն ժամանակ
մենք ի միասին մեռնէինք:

Գ.

Ուրախութիւններս մէկը միւսի ետեից անհետացան:

Այն հին տունը, որի արևի տակ փալլող մանր լուսա-
մուտններն ու եղենիները մէջ ծխող ծխնելոլոզները լոկ հեռուից
տեսնելը հրճուանք էր պատճառում ինձ, այժմ մռայլ ու ա
մալի էր թւում: Չմեռը մի տեսակ երկար էր թւում: Վառա-
բանում պայծառ վառուող կրակը սառնամանիքի ժամանակ
երբեմն ճաշակով գեղանկարում էր մեր լուսամուտները և երբ
հովառում խաղաղութիւն էր տիրում, այդ կրակը, որի մօտ
նստած ծխամորչս բերանին, մտածում էի զանազան բաների
մասին, այժմ միայն մտքեր էր ներշնչում ինձ: Խանձափալ-
տերը տխուր ճալթիւններ էին արձակում: Ռազօն կարծես
անկիւններում ում-որ սրտնում էր: Կալասը լուռ ու մունջ
կողովներ էր հիւսում, ոստերի կոտոր առաջին: Աննա տատը
տէր-ողորմեան էր համրում: Վարդ-Մարին, գունատ, սեա-
զգեստ, տուն ու դուրս էր անում, ամեն բանի նալում և ան-
շուկ ամեն ինչ կատարում, այնպէս՝ ինչպէս իւր հանգուցեալ
մայրը:

Ես սովորաբար նստած էի գլխակոր և նոյնպէս լուռ.
երբ մահը վրայ է հասնում մէկին, էլ ոչ մի տրտունջ օգուտ
չունի:

Այո՛, այդ ձմեռը շատ երկար էր թւում մեզ:

Սակայն ինչպէս միշտ՝ այս անգամ էլ զարուհը եկաւ:
Հաճարի ծառերը պտուկները վեր թողին. լուսամուտները բաց-

դեցան և մեր տան առաջի տանձենին սպիտակ ծաղիկներով ծածկուեց. թուղուններն սկսան երգել, միմեանց հետապնդել, սկսեցին բալներ շինել, կարծէք թէ մի առանձին բան չէր պատահել:

Ես սկսալ նախկին աշխատանքս, ուղեկցելով գլխաւոր վերահսկող պ. Ռամօին իւր շրջադարձութիւններին, անտառին նայելով և հետեւելով փալտ կտրելուն: Մենք առաւօտը վաղ գուրս էինք գնում և շատ ուշ տուն դառնում:

Վիշաք ամենուրեք հետևում էր ինձ, բայց ես էլ մխիթարութիւն էի գտնում Վարդ-Մարիով, որ դարմանալի կերպով աճում էր ու լաւանում:

Մի կարծիր, ժօրժ, թէ ես որպէս հայր գովում եմ նորան: Ի դուր կորսնէիք Սալերնից մինչև Լիւտցէլշտէլն բոլոր հովիտներում ու անտառներում նորանից բարեկազմ ու գեղեցիկ օրիորդ, ալնպխի գեղեցիկ կապուտ աչեր և լուսաթաթախ հրաշալի գլուխ: Եւ ի՞նչպէս լաւ գիտէր նա տանու և ալլ ամեն աշխատանքները... Այ՛ո՛, կարող եմ ասել, որ մի հրաշալի արարած էր, քնքով և պարթև:

Երբ ես ուշ դիշերով սուն էի դառնում, նա ընդ առաջում էր ինձ և դէմ էր անում իւր վարդ կարմիր թշերը, և ես շատ անգամ մտածում էի.

Վարդ-Մարին աւելի գեղեցիկ է քան իւր մայրն ալդ հասակում, և նոյնչափ խոհեմ, ինչքան նա. մի տրտնջան, Ֆրեդէրիկ, դժբաղտութիւնիցդ. շատերը կնախանձէին, որ ալսպխի դուտոր ունիս, որ քիչ ալսչափ մխիթարութիւն և ուրախութիւն է պատճառում:

Երբ լիշում էի կնոջս՝ արտասուք էի թափում աչքերից և ասում էի.

Եթէ կատարինը կարողանար Վարդ-Մարիին տեսնել, ինչքան երջանիկ կլինէի:

Ալդ ժամանակները ես մտաբերեցի, որ պատօնս թողնելու ժամանակը սօտենում է, իսկ եքք Վարդ-Մարին տասնեհօթն տարին մտաւ, ես արդէն սկսեցի մտածել, որ լաւ կը լինէր նորա համար մի բարի ու ազնիւ ամուսին գտնել, անտառալին մասում ծառայող մի երիտասարդ, որի տանը ես խաղաղութեամբ կնքէի իմ մահկանացուն, որդոցս ու թոռներին մէջ, և որը իմ տեղս բռնելով ալնպէս լարգէր ինձ, ինչպէս որ ես լարգում էի կնոջս հօրը՝ ծերունի Բրուտոյին, քսան

տարի առաջ նորան փոխարինելով պատեղ:

Ես աչքիս չառաջ ունէի Ֆէլսֆէրդից մի բարձրահասակ և գեղեցիկ տղամարդ որ չորս թէ հինգ տարի առաջ թողել էր հրաձիգ գունդը և անտառապահ էր նշանակուել մեղանից ոչ հեռու, Տօմենթալում:

Նորա անունն էր Ժան Մէրլէն. նա ծանօթացել էր արդէն լեռնալին գործին Էլզասի Էգիսլայմում պարապելիս: Այս երիտասարդը ինձ դիւր էր գալիս իւր լաւ բնաւորութեամբ և դարձեալ նորանով, որ Վարդ-Մարին բաւական բարեհաճ էր դէպի նա: Ես նկատում էի, որ սա թեթև կերպով կարմրում էր ամեն անգամ, երբ նա գալիս էր հաշիւ տալու իսկ նա գալիս էր միշտ տաք հագնուած, խնամքով սանրուած, և իւր որսորդական եղջիւրով զլսարկը զարդարած գիլի ոտիկով: Նորա հաստ ձալնը քնքշանում էր, երբ արտասանում էր այս խօսքերը.

Բարեւ, օրիորդ Վարդ-Մարի. Բնչպէս էք: Ի՞նչ գեղեցիկ եղանակ է... Ի՞նչ պարզ օրս. և ալլն: Նա կարծես լուզուած էր. Վարդ-Մարին ամօթխածութեամբ էր պատասխանում նորա ողջունին: Բոլորովին պարզ էր, որ նոքա սիրում էին և սիրահարուած էին մէկ մէկու վերայ—մի շատ բնական բան նոցա տարիքում:

Ես այս բանի մէջ ոչինչ վատ բան չէի տեսնում. ընդհակառակն, ես մտածում էի.

«Երբ նա դալ ամուսնութեան առաջարկութիւն անելու, ես միանգամից ոչ հա կասեմ և ոչ էլ չէ. պէտք չէ ցոյց տալ, որ կարծես թէ վրայ ես պրծնում մարդկանց. բայց լետոյ,—ցոյց տալով որ զգացուած ես նորա խնդրից,—համաձայնութիւնս կտամ, որովհետև ջահիլներին լուսահատութեան չը պէտք է հասցնել:

Ժան Մէրլէնի հայրը լիսնապետ էր հետեակ գնդերից մէկում, իսկ նորա հօրեղբայր Գանիէլ Մէրլէնը զպրօցական զարժապետ էր: Թէպէտ և նորա մայրը իւր ամուսնու հետ կենում էր մի փոքրիկ տանը անտառում, բայց նա Ֆէլսֆէրդում իւր սեփնական տունը ունէր պարտիզով և հինգ վեց դեսեատին լաւ գետնով. դորանից լաւ ընկեր ամեն կողմից ես չէի կարող ցանկալ դստերս համար:

Ամեն ինչ ցանկացածիս պէս եղաւ: Գրեթէ ամեն երեքուկու, արևամտի հետ շրջագալութիւնս աւարտելով, երբ խաղա-

դուժինն է տիրում անտառի ստուերներում,—խաղաղութիւն,
որ հաղիւ խանգարում է փոքրիկ զեռակի խոխոջալով,—եւ-
տուն էի դառնում և այդ սիրելի անկիւնում մտածելով որդ-
ւոցս կեանքի, թոռնակներս, այդ մանրիկ արարածների լոյս-
աշխարհ գալու մասին, որոնց կտանէինք կնքելու Գողէնհայմի
հին եկեղեցին,—ես ակամայ ասում էի ինքս ինձ.

«Այն, այս ցնորքները կիրականանան... երբ դու ծերանաս,
Յրեղէրիկ, բոլորովին կզառամես, երբ միջքդ կկռանայ տա-
րիքիդ ծանրութեան ներքոյ, ինչպէս Աննա տատի մէջքն է,
գլուխդ կսպիտակի, և կուղևորուիս նախահայրերիդ մօտ, բա-
ւական ապրած և երկտասարդ զօլգին օրհնելով, քո մահից
լետոյ երկար, շատ երկար ժամանակ ժան Մէլլէնն ու Վարդ-
Մարին կմտարերեն քեզ»:

Մօտենալով այն շաւղին, որ անցնում էր ժանի անտա-
ռի տան վերևից, ցած նայեցի տանիքին, ցանկապատած պար-
տիղին և բակին, ուր ժանի մայրը գիշերները հաւա-
տուն էր ածում իւր հաւերն ու բաղերը, վասն զի մեզ մօտ
անտառում աղուէսներն անպակաս են: Նայեցի վերևից և
զլխարկս հանելով՝ ձայն տուի.

— Բարի երեկոյ, Մարգրեղէլ:

Նա գլուխը վեր բարձրացրեց և ուրախ աղաղակեց.

— Բարև, անտառապետ: Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

— Ծնորակալ եմ, Մարգրեղէլ. փառք Աստուծոյ, շատ
լաւ է գնում գործերս:

Եւ մացառների միջից ցած գնացի նորա մօտ և մենք
սեղմեցինք միմեանց ձեռները:

Մի պատուական կին էր, միշտ բարի և ուրախ: Առանց
բացուելու՝ երկուսս էլ լաւ գիտէինք թէ ամեն մէկս ինչ էր
մտածում: Մենք զո՞ր էինք եղանակի լաւութեան կամ վատու-
թեան մասին խօսելով, իսկ մնացածն արդէն ինքն ըստ ին-
քեան հասկացում էր:

Մի քիչ խօսեցինք ու գնացի: Մարգրեղէլը ետևիցս ձայն
տուեց իւր փոքր ինչ ջախջախուած ձայնով, վասն զի արդէն
վաթսուն տարուան մօտ էր.

— Բարի ճանապարհ, անտառապետ: Զմոռանաք ողջոյնս
լիչել օրիորդ Վարդ-Մարին և տատին:

— Ապահով եղէք, չեմ մոռանալ:

Պատահում էր, որ շրջագալութիւնս հինգ ժամից առաջ

էի աւարտում և հանդիպում էի Ժան Մէրլէնին, որ քարչ էր գալիս մեր տան մօտ՝ Վարդ-Մարին, բանջար ժողովելով պարտիզում, ուրախ խօսակցում էր նորա հետ ցանկապատից:

Նորոգութեան իմ մէջ լիշողութիւններ հին հին դարերից, երբ ես հաճոյախօսում էի ատէրինին զի միջից անշշտնչ անցնելով, ծածուկ մօտենում էի ջահիլներին և քսան քալաչափ հեռուից գոչում:

— Ուրեմն, Ժան Մէրլէն, ձեր ծառայական պարտաւորութիւններն էք կատարում: Գուք հաճոյախօսութիւններ էք անում դեռատի օրիորդների հետ:

Նա դարձնում էր դէպ ինձ իւր վիրաւորուած դէմքը և պատասխանում:

— Ներեցէք, պ. անտառապետ, ես եկաչ պաշտօնիս վերաբերեալ գործով և մինչ դուք այստեղ չէիք՝ օրիորդ Վարդ-Մարիի հետ էի խօսում:

— Լաւ, լաւ... տեսնում ենք: Ես այնքան էլ չեմ հաւատում աղուէսներին:

Եւ սկսում էինք կատակիլ և ուրախանալ:

Տեսնում ես, Ժորժ, կարծես թէ բազում վերադառնում էր դէպի մեզ:

Ես Ժան Սէրլէնին նույնքան էի հաւատ ընծայում, ինչքան և Վարդ-Մարիին և ինձ: Կեղծ մարդիկ չկան մեր հարկներէքում, դոքա ուրիշ երկրներից են գալիս մեզ մօտ:

Գ

Գործերն այդ վիճակում մնացին ամբողջ 1868 թուի ընթացքում: Ժան Մէրլէնը շարունակ առիթ էր որոնում մեղ մօտ լինելու ծառայութեան գործով կամ դիմում էր մեղ ընտանեկան գործերի մասին խորհուրդներ հարցնելու: Նա մի քանից էր վախենում, որ ես չմերժեմ Վարդ-Մարին տալ նորան: Երբեմն, ինձ հետ շրջագայելով, նա գլուխը կախ էր գցում և խորը մտածմունքի մէջ ընկնում, երբեմն սկսում էր խօսել և լանկարծ լուում:

Իմ կողմից ես ցանկանում էի, որ նա աւելի համարձակ լինէր, բայց ինքս չէի կարողանում խօսք բաց անել, որովհետեւ իբրև իշխանաւորի՝ անվախել էր ինձ. ես սպասում էի որ նա պաշտօնապէս առաջարկէ, ենթադրելով, որ նա գործին

վախճան կտալ կամ դրաւոր դիմումով և կամ իւր ազգականներից մէկին կուղարկէ ինձ հետ խօսելու. նա կարող էր ուղարկել օրինակ իւր հօրեղբայր Գանիէլ Մէրլէնին, Ֆէլքերդի դպրոցական վարժապետին, որ ամենից լարդուած մարդ էր և կարող էր իւր վերալ առնել մի այդպիսի փափուկ լանձնաբարութիւն:

Ինձ վերաբերեալ մտքեր էլ էին անցնում զլիսովս: Ինարկէ, աշխարհիս երեսին ամեն բանից աւելի դստերս երջանկութիւնն էի ցանկանում, բայց պէտք էր ալնպէս սարքել, որ ամենքի համար լաւ լինէր: Մինչև պաշտօնիս լրանալը երկու տարի էլ էր մնացել. եթէ մինչև ալդ ժամանակ փեսաս չնշանակուէր իմ տեղը, ևս ստիպուած կլինէի այս հին տանից հեռանալ, որի հետ ալդքան թանկագին և տխուր լիշատակներ էին կապուած, վերաբերութեամբ ծեր Բրուաաի, խեղճ կնոջս, Աննա տատի,—միով բանիւ, ամբողջ անցկացրած կեանքիս լիշատակներ. դժուար էր այս ամենը թողնել մի անկալտ կեանքի համար ուրիշ երկրում, բոլորովին օտար մարդկանց մէջ:

Այս մտածմունքը լուսահատութիւն էր բերում ինձ վերայ. Ես գիտէի, որ Վարդ-Մարին և Ժան Մէրլէնը միշտ կլարդեն ինձ ինչպէս իրանց հօր: Բայց սովորութիւնը՝ երկրորդ բնութիւն է. ծեր աղուէսներն ու նապաստակներն անգամ, վիրաւորուելով իրանց բների ու որջերի մօտերքում, միշտ վերադառնում են ալնտեղ, նոքա պահանջ են դրում մահից առաջ տեսնել ալն թուփն ու խոտը, ուր իրանց ջահիլութիւնն է անցել, ուր նոքա զգացել են սէր, հոգս ու վիշտ, որով համակուած է աշխարհիս բոլոր արարածների երեք չորրորդ մասի գոլութիւնը, տխուր լիշողութիւնները նոյնքան է մարդ գնահատում, ինչպէս և անցած բաղտաւորութիւնը: Ալք միջոցին ես աւելի մեծ դժբաղտութիւն չէի կարող ինձ երեւակայել, քան եթէ մեր լեռները թողնել և տեղափոխուել հեռու ալն ամենից, որի հետ ես ալնքան կապուած էի:

Պ. նախագահի մեկնելուց լետով ես չգիտէի, թէ ումից վարող էի բարի խորհուրդ հարցնել—ինչպէս լարմարեցնէի Վարդ-Մարիի պսակը մինչև պաշտօնիցս դուրս գալը. այս բանը շարունակ վրդովում էր ինձ, բայց պատահարար հանգամանքները խիստ բարեւաջող ընթացք ստացան:

Ե.

Պէտք է քեզ ասեմ,—շարունակեց Յրեզէրիկն իւր զրուցը ժորժին,—որ 1867, 1868 և 1869 թուերի ընթացքում մեզնից զանազան ուղղութեամբ գիտիչներ կտրտեցին և ճանապարհներ բացին երկաթուղուն փայտեղէն հասցնելու համար։ Այս մեծ աշխատանքները կառավարում էր Լիւտցել, շտէյնի անտառալին տեսուչ պ. Լարօշը։ Դա մի 55 տարեկան մարդ էր, տակաւին միանգամայն առողջ ու թարմ, շատ լուրջ և իր զորժին նուիրուած. որս և ձկնորսութիւն նորան գիւր չէին գալիս. նորա հետ լաւ լարաբերութիւն ունենալու համար կարիք չկար ճարտար հրաձիգ կամ լաւ ձկնորս լինելու, այլ պէտք էր միայն ճշտիւ կատարել պաշտօնի պարտաւորութիւնները։

Շատ անգամ նա անձամբ էր ղեկավարում աշխատողներին, ցոյց տալով թէ ուր պէտք էր ծառեր կտրտել կամ հողածել։ Նորա բոլոր տնօրինութիւնները պարզ էին և որոշ, և գործը առաջ էր դնում փառաւոր կերպով։

Նա ինքը իւր արժանիքը գիտէր և զիտէր ստորագրեալին փալիպել, երբ գոհ էր մնում նոցանից։ Դէպ ինձ նա միշտ ուշադիր էր և սովորաբար իմ ղեկուցումը լսելով իւր առանձնարանում Լիւտցելը շտէյնի մէջ, միշտ ասում էր.

—Շատ լաւ է... շատ լաւ է, անտառագետ.— և սղմում էր իմ ձեռքը։

1869 թուի գարնան հրաման եկաւ այն ճանապարհը քարելու, որ Պըտի-Պիերից իջնում էր մինչև Գրաուֆտալ հովիտը, և շարունակել որ միանայ Սալերնից Մէտտինգ նոր ճանապարհի հետ։ Այս ճանապարհի մի ճիւղը անցնում էր սըղօցարանի մօտից, իմ անտառի տնից ոչ հեռու, այնպէս որ ես գրեթէ ամեն օր կարող էի անձամբ հսկել աշխատութիւններին։ Աշխատանքի առաջին մասը գրեթէ աւարտուեց, և մեզ մնում էր միայն մի քանի ժալոեր քանդել, որոնք դուրս էին ցցուած հովտի մէջ, ճանապարհը հարթելու համար։

Մի անգամ, ըստ սովորականին Լիւտցելը շտէյնի զգալով ղեկուցման համար, ես առանձին սիրով ընդունուեցայ պ. տեսչից։ Առաւօտուայ տասը ժամի մօտ էր,— նորա նախաձաշի ժամանակը, և նա տուն դարձաւ հէնց որ ես նորա տան դըրան դանդը քաշեցի։

—Ա՛խ, դուք էք, Ֆրեդէրիկ հայրիկ,—ասաց նա ուրախացած, դուռը բանալով:—Փառաւոր առաւօտ է: Գործերն ինչ գիճակի են:

—Ձեր բոլոր պատուէրները ճշտիւ կատարոււմ են, տեսուչ, և ամեն ինչ ցանկացածից լաւ է ընթանում:

—Լաւ, լաւ, ասաց նա.—Նստեցէք խնդրեմ, խօսելու բան ունիմ: Ինձ հետ կճաչէք: Կի՛նս իւր ազգականների մօտ է Շամպայնում. բնկերացէք ինձ:

Յաճախ, երբ պատահել եմ նորա մօտ նախաճաշի ժամանակ, ինձ մի բաժակ գինի է առաջարկել, բայց երբէք մտքով չի անցկացրել իր հետ սեղան նստեցնել ինձ:

—Այստեղ նստեցէք, ասաց նա:—Է՛լ, Վիրթինի, ամաններ բերէք անտառապետի համար: Նախաճաշն էլ բերէք:

Մտածիր թէ ինչպէս զարմացել էի ես և դո՛հ այս պատուից: Չգիտէի թէ ինչպէս շնորհակալ լինիմ. բայց նա, կարծես, շնկատեց լուզումնքս: Նա տանու բաճկոնը հաղաւ և սեղան նստելով՝ հարցրեց ինձ.

—Լաւ արտօժակ ունիք, Ֆրեդէրիկ:

—Այո՛, պ. տեսուչ, այդ կողմից զանգատ չունիմ:

—Շատ գեղեցիկ ուրեմն, աւելի լաւ: Այս բիւֆլաթէքսից փորձեցէք: Վիրթինին լաւ խոնարարուհի է,—ձեր կարծիքը ատէք նորա հմտութեան մասին: Ձեր կենաց:

—Եւ ձեր, պ. տեսուչ:

Կարծես ևրազումն էի և հարցնում էի ինքս ինձ.

«Այդ դո՛ւ ես, Ֆրեդէրիկ, այս գեղեցիկ սենեակում նախաճաշում, քո իշխանաւորի հետ սեղանակից, և այսպիսի պատուական գինի խմում:

Ինձ համար շատ էլ զիւրին չէր:

Պ. Լարօշն, ընդհակառակն, աւելի էր բացում, այնպէս որ երկու երեք բաժակ գինուց լետով ինձ արդէն շատ ընական թուաց, որ իւր կնոջ բացակալութեամբ նա շատ գո՛հ էր խօսելու ինձ հետ կարգերի, Գրաւֆտալի նոր ճանապարհի և այլ նիւթերի մասին, և ես սկսեցի պատասխանել առանց քաշուելու:

Մենք շարունակեցինք նախաճաշը, խօսակցելով, և երբ Վիրթինին մօտ բերեց բիսկվիտն ու պանիրը, տեսուչը թեքուելով աթոռի մէջքին և ուրախութեամբ նայելով ինձ՝ ասաց.

—Սակալն մեր տարիքում դուրեկան բան է ալն դրու-
թիւնը, որի մէջ որ ես ու դու ենք... Հմ, հմ, հմ: Կարծեմ
ձեր բոլոր ատամները դեռ առողջ են, Յրեդէրիկ:

—Այո, դեռ բաւական ամուր են, պ. տեսուչ:

—Քանի տարեկան էք, —հարցրեց նա:

—Շուտով լիսունը կլրանամ, պ. տեսուչ:

—Իսկ ես լիսունեհինդ եմ: Համարեմ թէ երկուսն էլ
մէկ է. մեր պաշտօնաթողը շատ էլ հեռու չէ:

Նա շարունակ ծիծաղում էր: Բայց պաշտօն թողնելու
մասին մտածմունքը իմ բոլոր աշխուժս խլեց:

Պանիր հրամցնելով ինձ՝ պ. Լարօշը հարցրեց.

—Ի՞նչ էք մտադիր անել երկու տարուց լետ: Ինձ կինս
խըր հայրենիքն է տանում, Շամպայն: Դա շատ էլ իմ սրտովը
չէ, որովհետեւ ես դաշտ տեղ չեմ սիրում. բայց գիտէք ինչ որ
կինն է ուզում, Աստուած էլ ալն է ուզում: Սա մի առած է,
բայց առածները դուրի չեն մի մի առողջ մաքից:

—Ճշմարտ է, պ. տեսուչ, —պատասխանեցի ես, —բայց դա
շատ վատ առած է. իսկ ես չեմ կարող լեռները թողնել. չա-
փազանց սովորել եմ ես նոցա, և եթէ ստիպուիմ ալտեղից գը-
նալ, տասն և հինգ օր էլ չեմ դիմանալ:

—Ի՞նչ կարող ենք անել, —նկատեց նա. —մենք, ծերերս
պէտք է տեղի տանք երիտասարդներին:

Չնայելով որ լաւ խմել էի, բայց չափազանց սրտնե-
ղած էի:

—Ես որ ձեր տեղը լինիմ, Յրեդէրիկ, —ասաց տեսուչը, —
գիտէք ինչ կանեմ: Որովհետեւ չափազանց սիրում էք լեռները
և ձեզ համար միտք չունի անտառում չապրելը, —մի ալնալի-
սի փեսայ կգտնէի, որ լեռնային բաժնում ծառալէր, մի խե-
լացի ջահիլ որ ձեր տեղը բռնէր և օրի մօտ ապրէիք մինչև
ձեր կեանքի վերջը, կանաչ մեխակները ու մալրիները բուր-
մունքի մէջ:

—Ա՛խ, ես էլ հէնց այդ մասին եմ մտածում, պ. տեսուչ
բայց...

—Էլ ինչ արաց՝... Լաւ աղջիկ ունիք, ինքներդ աղնիւ
մարդ էք, —էլ ինչ դժուարութիւն կալ: Յուս ունիմ, որ ընտրելի
պակասութիւն էլ չլինի. անտառային պահապաններից գեղե-
ցիկ կէրնը, Կօնատիեն ու թէ ուրիշները բազմաւոր կհամարեն
իրանց, որ ձեզ փեսայ լինելու արժանի լինին: Իսկ քաջարի

Ժան Մէրլէնը... ահա մի օրինակելի անտառալին պահապան-
չիտակ, գործունեաց, խելացի. իսկ և իսկ լարմար փեսացու.
Ամենից առաջ նա պիտի բարձր պաշտօն ստանայ և իմ կար-
ծիքով, նա ամեն լատկութիւնները ունի ձեր պաշտօնին հաս-
նելու.

Ես մինչև ականջներս կարմրեցի և չկարողանալով ինձ
զսպել՝ պատասխան տուի.

— Բոլորովին ճշմարիտ էք ասում. Ժան Մէրլէնի մասին
ոչ ոք վատ չի կարող ասել. դժուար կպատահի այդպիսի գե-
ղեցիկ և աղնիւ երիտասարդ. բայց ինքս կարող չեմ իմ դուս-
տրըն առաջարկել նորան, ով հաճելի է ինձ. Մէրլէնը երբէք
ինձ հետ չէ խօսել Վարդ-Մարիի հետ ամուսնանալու մասին,
սչ նորա մայր Մարգրէդէլը, ոչ էլ հօրեղբայր Գանիէլը, ոչ
ոք նոցանից: Գուք շատ լաւ հասկանում էք, պ. տեսուչ, որ ես
չեմ կարող առաջին քայլն անել այս խնդրում, — այդ արդէն
չափազանց վատահուծիւն կլինէր: Ամեն բան այնպէս պիտի
կատարուի ինչպէս հարկն է. առաջարկութիւնը պէտք է լինի
պաշտօնապէս փեսայի կողմից:

Նա ուղեցաւ պատասխան տալ ինձ, բայց Վիրժինին
սուրճ բերեց, և նա վառարանից մի տուփ վերցնելով և ինձ
տալով ասաց.

— Մխեցէք խնդրեմ, Ծրեղէրիկ:

Ես տեսայ, որ նա մի բանից շատ գոհ էր. և հէնց որ
սպասուհին դուրս գնաց, ցնձագին աղաղակեց.

— Ուրեմն, Ծրեղէրիկ, ձեզ պէտք է լալտնեմ, որ Ժան Մէր-
լէնն ու Վարդ-Մարին միմեանց սիրում են. Մնում է, որ հօր-
եղբայր Գանիէլը հազնի իւր տօն օրուայ հանդերձն ու մա-
չիկներն ու գալ ձեզ հետ խօսակցելու այդ մասին:

Նա բարձրաձայն ծիծաղեց և տեսնելով, որ ես շատ զար-
մացած եմ, շարունակեց.

— Ես ձեզ երկու խօսքով կպատմեմ ամբողջ գործը. վեր-
ջին անգամ, երբ ես տեսայ Ժան Մէրլէնին, նա այնպէս աը-
խուր էր, որ ես հարցրի, թէ հիւանդ հօ չէ: Խեղճ տղան ար-
տասուալից աչքով պատմեց իւր վիշտը: Գուք այնպիսի մի
խիստ և պատկառելի տեսք ունիք, որ նոցա տանից
ոչ ոք չէ համարձակում ձեզ մօտենալ, և այդ բարի մարդիկ
ինձ դիմեցին, ենթադրելով, թէ ես կարող եմ աղղել ձեզ վե-
րայ: Զէք թող տալ ինձ ևս համազղեստ հագնել, Ծրեղէրիկ: